հատանքը հայտնելով Կալկաթայի եկեղեցական խորհրդին, որ ջանասիրությամբ իրենց կարելին են անում՝ պահպանելու և նոր շունչ հաղորդելու համար գաղութին:

Այնուհետև ներկաներն ուղղվեցին դեպի Ս. Նազարեթ եկեղեցու և Մարդասիրական ճեմարանի մեծ բարերար Խաչիկ Աստվածատուրյանի գերդաստանին նվիրված դամբարան, ուր հոգեհանգստյան աղոթք բարձրացվեց մեծ բարերարի և նրա հարազատների հոգիների հանգստության համար: Հոգեհանգիստ կատարվեց նաև եկեղեցու հարևանությամբ գտնվող հայկական գերեզմանատանը:

Արարողություններին ներկա էին Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Աշոտ Քոչարյանն՝ իր տիկնոջ հետ, Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, Իրանից ժամանած շուրջ 40 ուխտավորներ, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաներ:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ՆԱԶԱՐԵԹ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԲԱՐԵԲԱՐՆԵՐԻ ՀՈԳՈՒ ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Նոյեմբերի 12-ին Կալկաթայի հայոց Ս. Նազարեթ եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մարդասիրական ճեմարանի հիմնադրման 185-ամյակի և Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու հիմնադրման 100-ամյակի առիթով Անգլիայից ժամանած նախկին ճեմարանական, Բրիտանական գրադարանի Քրիստոնյա Արևելքի բաժանմունքի ղեկավար Տ. Ներսես ավ. քհն. Ներսեսյանը: Սրբազան արարողության ընթացքում պատարագիչ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց: Նա մասնավորապես ընդգծեց, որ շատ կարևոր է մարդկային հիշողությունը, ուստի մենք պարտավոր ենք միշտ երախտագիտությամբ հիշելու այն մարդկանց, ովքեր հիմնադրեցին Մարդասիրական ճեմարանը հայրենիքից այդքան հեռու՝ մեր գործերով և ուսումնատենչությամբ պատիվ բերելով 185-ամյա կրթական հաստատությանը:

Ս. Պատարագից հետո Մարդասիրական ճեմարանի հիմնադիր բարերար Աստվածատուր Մուրադխանյանի գերեզմանին կատարվեց հոգեհանգիստ՝ ճեմարանի բարերարների հոգու հանգստության համար: Արարողությունից հետո ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանն անդրադարձավ Մարդասիրական ճեմարանի հիմնադրման պատմությանը՝ մեկ անգամ ևս հատկապես ճեմարանականներին հորդորելով իրենց կյանքում միշտ մտապահել ճեմարանի հիմնադիր ջուղայեցի վաճառական Աստվածատուր Մուրադխանյանի և մյուս բարերարների հիշատակը, որոնք երբեք չմոռացան օտար հողում հայ պատանիների հայեցի կրթության և Հայոց Եկեղեցուն յուրովսանն աջակցելու մասին:

Ելույթ ունեցավ նաև Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Աշոտ Քոչարյանը: Նա շնորհավորեց ներկաներին զույգ հոբելյանների կապակցությամբ՝ անդրադառնալով հայ-հնդկական դարավոր բարեկամությանը՝ այդ գործում մասնավորապես ընդգծելով կալկաթահայության, Մարդասիրական ճեմարանի և Հայոց Եկեղեցու մեծ դերակատարությունները: